

—= Ս Ի ՈՒ =—

ԼՂ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1964

Հոկտեմբեր

թիւ 10




ԼԱՉԳԷԼ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԵԼ ԱՅ Ե՛ ԿԱՄՈՔԼ ԱՉԳԻՍ.
ԵՂԻՍԿՈՂՈՍԱՊԵՏ Ե՛ ԿԱՌՈՐԽԿՈՍ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՅ.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱՉԳԷԼԱՆ ՆԱԽԱԵՇՄԱՐ ԱՌՈՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԼԱ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՇԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱՌՈՐԽԿԷ ԷՃՄԱԾԵՒ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ Ե՛ ԾՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԻ ԱՐԲԵՊԻՍԿՈ-
ՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐԲ-
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱ-
ՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ Ե՛ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ Ե՛ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ Ե՛ ՊԱՇՏՕՂԵ՛ԻՅ ՀԱՅԱՍ-
ՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ Ե՛ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ:

«Ի ՄԱՀ ՀԱՄԱՐԵԱԼ Է՛ԻՆ, Ե՛Ի ՄԱՀՔ ԻՐԵԱՆՅ՝ ԱՆՇՈՒՇՏ ԿԵԱՆՔ»:

ԵՂԻՇԻ

ՄԵՐ ՀԻՆԱՒՈՐԸ ԱՉԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄԸՆ Է, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻ
ՀՈՐԻՉՈՒՆ ՎՐԱՅ ԲԱՐՁՐԱՑՈՂ, ՇԱՂԱԽՈՒԱՐ ՈՒ ՄԱՐՄԻՆ ԱՌԱՐ ՆԱՀԱՏԱԿԵՐՈՒ ԱՐԻՆՈՎ, ԲԱ-



րիւն, որ Գեղեցիկիւն Եւսեփեանի ՍՏԵՂԵԱՐԱՐ ՀԱՆՃԱՐՈՎ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԱԶԳ ՈՒ ԱԶԱՏ ՀԱՅՐԵ-
 ՆԻՔ ԿԵՐՏԵԼՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԿԻՐՔՈՎ, ԱՅՆ ՕՐԷՆ ՄԱՆԱԽԱՆԴ, ԵՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԼՈՅՍԸ ԻԶԱՒ Ի ՀԱ-
 ՅԱՍԱՆ ԱՇԽԱՐՀ: ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՒԱՏԱՑ ԿԵԱՆՔԻՆ, ՀԱՒԱՏԱՑ
 ԼՈՅՍԻՆ ՈՒ ՇԻՆԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ, ԵՒ ՀԱՒԱՏԱՑ, ԹԷ «ՍԷՐ ՈՉ ԵՐԲԵՔ ԱՆԿԱՆ» (Ա. ԿՈՐՆ. Ժ. 5): ԵՒ ԱՅՍԳԷՍ ԱՀԱ ԱՆ ԲԱՑԱՒ ԴՈՒՆԵՐԸ ԻՐ ՀՈԳԻՒ ՈՒՃԵՐՈՒՆ, ԴՈՒՆԵՐԸ ՅԱՒՏԵՆԱԿԱՆ
 ԿԵԱՆՔԻՆ:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՐԱՇՐԱՋԱՆԸ ՍԿԻԶԲ ԱԹԱՒ ՀԻՆԴԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ, ՀԱՅ ՏԱ-
 ԲԵՐՈՒ ԳԻՒՏՈՎ ԵՒ ԱՒԱՐԱՅՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՎ:

ԱՒԱՐԱՅՐԸ ԷՐՈՒՄԸ ԵՂԱՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՈԳԵԿԱՆ ՈՒՃԵՐՈՒ ԱՐԳԱՍԱՒՈՐՄԱՆ ՈՒ ՊԱՅ-
 ԴԱՅ ԱՐՏԱՑԱՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ, ԵՒ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՍԿԻԶԲԸ ՄԵՐ ԲՈՒՆ
 ԱՇԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՈՐ ԻՐ ԴՐՈՇՄԸ ԴՐԱՒ ԵՏԵԱԿԱՑ ԲՈՂՈՐ ԴԱՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ: ՎԱՐԴԱՆԱՅ
 ԵՒ ՂԵՒՈՂԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԱՄԱՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ: ԵՒ ԱՅԴ ՕՐԷՆ Ի
 ՎԵՐ, ԱՄԲՈՂԸ ՀԱԶԱՐ ԵՒ ՀԻՆԴ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ, ՄԵՐ ՆԱԽՆԻՔ ՆՈՅՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ
 ԽԱՐՏԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՑԻՆ «ԼԱՍՆ ՅԻՍՈՒՍԻ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ», ՆՈՅՆ «ԶԻ ԲԱՐՁՐԱՍՅԻ ԿՈՂՄՆ ՃԸՇ-
 ՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ՈԳԻՐՈՎ, ՄԻՇՏ ՄԱՀԸ ՄԱՀՈՎ ԵԱՂԹԵԼՈՒ ՀԱՒԱՏՔՈՎ:

ԱՅԴ ԱՐԻՒՆՈՏ, ԲԱՑՑ ԱԶՆԻՒ ՓԱԹՔԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
 ԱՐԱՋԱՆԱԳՐԵՑ ԻՐ ՎԵՐՁԻՆ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՆ ՏԱՐԻՆԵՐ ԱԹԱՋ:

ԱՅՍՕՐ, ՄԵՐ ՍՐՏԵՐԸ ԾՈՎ ՎՇՏՈՎ ԼԵՑՈՒՆ, ՀՈԳԵԿԱՆ ԵԱՆՐ ԱՊՐՈՒՄԼԵՐՈՎ ԿՈԳԵԿԱՑԵՆՔ
 ԵՐՇԱՏԱԿԸ ԱՅՆ ԱՀԱՒՈՐ ՈՂԵՐԳՈՒԹԵԱՆ, ՈՐ ՍԿԻԶԲ ԱԹԱՒ 1915Ի ԱՊՐԻԼ 24ԻՆ ԵՒ ՏԵՒԵՑ ԱՄ-
 ԲՈՂԸ ՀԻՆԴ ՏԱՐԻ, ԲԱՋԻՆԸ ԸՆԵԼՈՎ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՑՈՒԹԻՒՆԸ ՍԱՐՍԱՓԵԼԻ
 ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐՈՒ ՄԷՋ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՈՒ ԴՈՒ ԴՈՒՄԱՐՈՒՄՈՒ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԹՈՒՐԳԻՈՑ ԵՆՂԱՍ-
 ՊԱՆ ԿԱՌԱՎՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ: ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄՕՏ ԵՐԿՈՒ ՄԻԼՈՒ ՀԱՅԵՐ: ՀՐԿԻԶՈՒՆԵԱՆ ՈՒ
 ՔԱՐՈՒՔԱՆԴ ԵՂԱՆ ԲԱԶՄԱՀԱՐԻՒՐ ՇԷՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՈՒ ՎԱՆՔԵՐ, ՇԱ-
 ՏԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՅԱԿԵՐՏ ԿՈՒՈՂՆԵՐ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ: «ՔԱՋ ՆԱՀԱՏԱԿԸ ՄԵՐ
 ԱՆԿԱՆ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԵՒ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՑՔ ՄԵՐ ԽՈՂԽՈՂԵԱՆ Ի ԶԵՌԱՅ ԱՆՕՐԻՆԱՅ, ԳԵՂԵՑԻԿ
 ԵՐԻՏԱՍԱՐԳՆ ԶԵՆԱՆ Ի ՍՊԱՆՈՒՄՆ, ԵՒ ԲԱԶՈՒՄ ԿՈՒՍԱՆՔ ՎԱՐԵԱՆ Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ, ԳԻՐԳ ԿԱ-
 ՆԱՅՔ ԱՆԿԱՆ Ի ՏԱՌԱՊԱՆՍ ԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԶՈՒՄ ՈՐԲՔ ԿԱԿԱՆԻՆ ԴԱՌՆԱՊԷՍ», ԵՒ «ՇԻՆՈՒՄՔ
 ՄԵՐ ԵՂԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՔ ԴԻԱԿԱՆՑ ՄԵՐՈՑ, ԵՒ ՎԱՍՏԱԿԸ ԶԵՌԱՅ ՄԵՐՈՑ ՏԱՊԱԼԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ՄԵՐ»
 (ԵՂԻՇԷ): ԱՅԴ ՍԵՒ ՕՐԵՐՈՒՆ ԵԿԱՋ ԷՐ ՊԱՀ ՄԸ, ԵՐԲ «ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ ԱՅԼԵՍ ԱՆՀԱՐ ԷՐ
 ՀԱՅ ԸԼԼԱՍ»: ԱՄԷՆ ԵՈՅՍ ԿՈՐՍՈՒՄՈՒ ԿԸ ԹՈՒԷՐ, ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԸ՝ ՓԱԿՈՒՄՈՒ ՈՒ
 ԱՐԵԱՆ ՄԷՋ ԲԱՂՈՒՄՈՒ:

ԲԱՑՑ ՈՐՎ ԱՆԻՄԱՆԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԿԵԱՆՔԻ, ԵՒ ՈՐՎ ՀՐԱՇԱԳՈՐԾ ՈԳԻ ՀԱՅՈՑ
 ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:

ՆԱՀԱՏԱԿՈՒՄՈՒ ԷՐ ԱՄԲՈՂԸ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ. ԱՅՈՒ, ՍԱԿԱՅՆ ՀԱՅԵՐԸ ԶԷՒՆ ՄԵՌԱՄ Ի ՍՊԱՌ,
 ՎԱՍԼԶԻ ԱՆՈՒՔ ԶՈՀՈՒՆԵՐ ԷՒՆ ՀԱՒԱՏՔՈՎ ԱՄՈՒՐ, ԹԷ «ԿԵԱՆՔ ՔՐԻՍՏՈՍ Է ԵՒ ՄԵՌԱՆԵԼ՝ ՇԱՀ»
 (ՓԻԼԻՊ. Ա 21): ԱՆՈՒՔ, «ՈՐՊԷՍ ՍԿԱՆ ՔԱԶՈՒԹԵԱՄԲ, ՆՈՎԻՆ ԵՒ ԿԱՍԱՐԵՑԻՆ ԶՀԱՆԳԷՍ ՆԱՀԱ-
 ՏԱԿՈՒԹԵԱՆ, ԼԻ ԵՐԿԱՒՈՐ ՍԻՐՈՎՆ, ԵՒ ԱՐՏԱՓԱՅԼԵՑԻՆ ԻՐԵՒ ԶԱՐԵԿԱԿ Ի ՄԷՋ ՏԻԵԶԵՐԱՅ,
 ՈՐՈՑ ԵՒ ԱՆՈՒԱՆՔ ՆՈՅԱ ԳՐԵԱՎ ԵՒ Ի ՊՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՅ» (ԵՈՎՀ. ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԻ):

ԻՆԶՊԷՍ ՎԱՐԴԱՆԱՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՕՐԵՐՈՒՆ ԵՒ ԱՅՆՈՒՀԵՏԵՒ ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ, ՄԱՀԸ
 ԵԱՂԹՈՂ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ՊԱՏՈՒՆ ՎԱՐԱԳՈՐԸ ԱՆՈՂՈՔ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ
 ՈՒ ԿԵԱՆՔԻ ԿՈԶԵՑ ՄԼԱՑՈՐԴԱՅԸ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՈՒՄՈՒ ԱԶԳԻՆ: «ԻՐ ՔԱՋ ՈՐԳԻՈՑ ՍՈՒՐԲ ԱՐԻՒ-
 ՆԵՎ» ԱՐԻԱՑԱՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՀԱԶԱՐ ՀԻՆԴ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻՆԵՐ ԵՏԵՈՑ, ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԱՆԻ
 ՄԵՐ ԱՒԵՏԻՍ ՏՈՒԱՒ՝ ՍԱՐԴԱՐԱՐՈՎ:

ԵՒ ԱՀԱ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ԱՒԵԼԻ ՏԱՐԻՆԵՐԸ Ի ՎԵՐ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՅՐ ԶԱՆԳՈՒՄԸ,

Մեկնեղությունը իր նախնեան ՄԱՅՐ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ, իր ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱՋԱՏ ԿԱԹԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈՎԱ-
նիտն ՆԵՐՔԵՒ, ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԿՈՂՔԻՆ, իր ԵՐՋԱՆԻԿ ԱՊԱԿԱՆ ԿԸ ԿԵՐՏԷ՝ ԱՊԱ-
ՀՈՎՈՒԹԵԱՆ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱԹԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ: ԻՍԿ Ի
ՍՓԻՒԹՈՍ ԱՇԽԱՐՀԻ ԶՐՈՒԱՅ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅԵՐԸ, ԻՐԵՆՑ ԱԶՔԵՐԸ ՅԱՐԱՅ ԴԷՊՈՒ ՎԵՐԱՇԻՆՈՒՈՂ ՈՒ
ՆԱՂԿՈՂ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԾԱԳԵՑԱՅ ԿԵԱՆՔԻ ՆՈՐ ԱՌԻՆՈՎ ԵՒ ՈԳԵՇՆՁՈՒԱՅ ԱՋՆԻՒ ՀՊԱՐ-
ՏՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՎԱԹ ՏԵՍԻԼՔՆԵՐՈՎ ԴԷՊՈՒ ՀԱՅՈՑ ԱՊԱԿԱՆ, ԿԵՐԱՋԵՆ ՕՐ ՄԸ ՎԵՐԱԴԱԹՆԱՂ ԱՐԱ-
ՐԱՏԻՆ, ԻՐԵՆՑ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՔՈՅՐԵՐՈՒՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ՄՕՏ, ԻՐԵՆՑ ՏՔՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ
ԸՆԴԱՅ ԲԵՐԵԼՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ:

ՀԱՅՈՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՋՆԱՊԷՍ ՊՍԱԿՈՒԱՅ Է ԾԱՂԹՈՒԹԵԱՆ ԲԱՐՔԻՆՈՎ ՈՒ ՆՈՐ
ԿԵԱՆՔԻ ԼՈՒՍԱԲԱՑՈՎ ԵՒ ՎԵՐԱՅՆԱՅ Է ՄԵՐ ՀԻՆԱՌՈՒՐՑ ԵՐԿԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՐԲԵՒ ԱԶԳԱՅԻՆ
ՊԵՏՈՒԹԻՒՆ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՋԱԽԿՆԵՐԸ, ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒԹՈՍ ԱՇԽԱՐՀԻ, ԱՅՍՕՐ, ՄԵՆ Ե-
ՂԵՌԷՆ ԾԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԾԵՏՈՑ, ԵՐԿԻՒՂԱՅՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԽՈՆԱՐՀԻՆ ԲԻՒՐԱՌՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱՆ-
ԵԱՅՏ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ ՈՒ ԿԱՂՕԹԵՆ ԱՆՈՆՑ ԱՆՄԱՀ ՀՈԳԻՆԵՐՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ Ե-
ՐԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: ԵՒ ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՆ ԻՐԵՆՑ ՈՒԽՏԷ՝ ՍՈՒՐԲ ՊԱՀԷԼՈՒ ԱՆՈՆՑ ՆՈՒՐԱԿԱՆ
ԾԻՇԱՏԱԿԸ ՈՒ ՄԵՆԱՌՈՒ ՀԱՌԱՏԱՐԻՄ ԱՆՈՆՑ ԼՈՅՍ ՀԱՌԱՔԻՆ, ԱՆՈՆՑ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՈԳԻՆ, ՀԱՅՈՑ
ԱԶԳԸ ՄԷԿՏԵՂՈՒԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՄԲՈՂՋ ԵՐԿԻՐԸ ՓՐԿՈՒԱՅ ՏԵՍԵԼՈՒ ԱՆՈՆՑ ՊԱՅՄԱՌ ԵՐԱՋԻՆ:

«ՊԱՆԴԱՅՔ ԴՈՒՔ ԸՆԴ ԼԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՁԵՐ, ՆՈՐՈԳԵՑԷՔ ԱՊԱ ԶՅԻՇԱՏԱԿՍ ՆԱԽՆԵԱՅ»
(ԱԼԻՇԱՆ):

ԱՅՍՕՐ, ԲՈՂՈՐ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ, ՈՒՐ ՈՐ ԱՂ ԳՏՆՈՒՆ ԱՆՈՆՔ, ԱՂՕԹԻՒ ՕՐ Է ՆԱԵՒ ՄԵՐ
ԺԵՂՈՎՈՐԴԻ ԽԱՂԱՂ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՈՒ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ՄԵՐ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ
ԱՆՍԱՍԱԿՈՒԹԵԱՆ ՈՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ԱՊՐՈՂ ՈՒ ՇԵՁՈՂ ԵՒ ԼՈՅՍԻ ՄԷՋ ԱՃՈՂ ՄԱՅՐ ՀԱՅԱՍ-
ՏԱՆԻ ՀԱՄԱՐ:

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ ՄԵԹԱՆ ԱՊՐԵԼՈՒ ՅՈՅՍՈՎ ԵՒ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒՈՂԻ ՏԵՍԻԼ-
ԲՈՎ:

ԱՅՍՕՐ, ԲՈՂՈՐԻՍ ՀԱՄԱՐ ԱՂՕԹԻՒ ՕՐ Է ՆԱԵՒ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈ-
ՂՈՎՈՐԴՆԵՐՈՒ ԻՐԱՒ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐՊԷՍՁԻ ԱՅԼԵՍ ԵՐԲԵՔ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԵՍԻՆ ՈՋ
ՄԷԿ ՏԵՂ ԱՐԻՆ ԶՀՈՍԻ, ԵՒ ՄԱՐԴԻԿ ՍՈՒՐ ԶՔԱՇԵՆ ԻՐԵՆՑ ՆՄԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ: ԹՈՂ ԽԱՂԱՂՈՒ-
ԹԻՒՆ ԸԼԼԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԵՒ ԲՈՂՈՐ ՄԱՐԴՈՑ ՄՐՏԵՐԷՆ ՆԵՐՍ: ԹՈՂ
«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՏՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՀԱՅԻՆ, ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐՈՒ-
ՐԵՍԻՆ» (ՍԱՂՄ. 27 14):

ՄԵՆՔ, ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՄԵՐ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԾԻՍ-
ՆԱՄԵԱՅ ՏԱՐԵԼԻՑԻ ՍԵՄԻՆ, ԱՅՍՈՒ ՄԵՐ ԿՈՆԴԱԿԱՒ, ԿԱԹԱՋԱԴՐԵՆՔ ՈՒ ԿԸ ՀՐԱՀԱՆԳԵՆՔ՝

Ա. ՈՐ ԾԱԹԱՋԻԿԱՅ 1965 ՏԱՐԻՆ ՀՈՋԱԿՈՒՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ
ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒԳԻ ԵՒ ԱՂՕԹԻՒ ՏԱՐԻ:

Բ. ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԲՈՂՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ, ԱՊՐԻԼ 24ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ
ՅԱՏՈՒԿ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԵՐ, ԱՂՕԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐ ԲԻՒՐԱՌՈՐ
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՀՈԳԻՈՑ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԼՈՒՍԱՌՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ:

Գ. ՈՐ ԲՈՂՈՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ, Ս. ՍԵՂԱՆԻ ՄԸ ԱՌՋԵՒ, ՁԵՏԵՂՈՒՆ ՄՇՏԱՎԱՌ
ԿԱՆԹԵՂՆԵՐ, ՆՈՒՐՈՒԱՅ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԾԻՇԱՏԱԿԻՆ: Ս. ԷՋՄԻԱՅԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ՄՇՏԱՎԱՌ ԿԱՆԹԵՂ ՄԸ ՊԻՏԻ ՁԵՏԵՂՈՒՒ ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԹԵԱՆ ԱՌՋԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ
ՍԵՂԱՆԻ ՎԵՐԵՒ, ՈՒՐ ԵՒ ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒՒ ԾԱՏՈՒԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԱՄԷՆ ՏԱՐԻ
ԱՊՐԻԼ 24ԻՆ:

Գ. ՈՐ ԲՈՂՈՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՆ ՄԷՋ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑ-
 ԻՈՅ ՀՈՎԱՆԻՒՆ ՆԵՐՔԵՒ, ԱՆՈՍՏՐ, ԲՈՂՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԵՐԱՇՈ ԳՈՐԾԱԿՑՈՒ-
 ԲԵԱՄԲ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՇԻ ԵՒ ՅԱՐԳԱՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՌՈՐ ՀԱՒԱՔՈՑՔՆԵՐ, ԴԱ-
 ՍԱՊՈՍԻԹԻՒՆՆԵՐ, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ, ՀԱՅ ԵՒ ԱՅԼԱԶԳԻ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ
 ՀԱՄԱՐ, ՆՈՒՐՈՒԱՄ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵԹՆԻՆ:

Ե. ՈՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ-
 ՆԵՐԸ, ՊԱՄԱԿԵՐՊՈՒՆ-ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԻՐԵՆՑ
 ՍԵՊՈՒՀ ՊԱՐՏԲԸ ՀԱՄԱՐԵՆ ԽՕՄՔՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ ՈՐԵԿՈՉԵԼՈՒ ՆՈՒՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԸ ՄԵՐ ԵՂԵԹՆԻ
 ՏԱՐՆԵՐՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՑԱՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ-ՀԱ-
 ՍԱՐԱԿԱՆ ՄԵՐԱՆՈՒՆ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒՆ, ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՎ ՀԱՅ ԵՒ ԱՅԼԱԶԳԻ ՀԵՂՆԱԿՆԵՐՈՒ ՊԱՏ-
 ՄԿԱՆ ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՎԱՐԲԱԹՈՒՂՔԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՅՈՒՇԵՐԸ ԵՒ ԳՐԱ-
 ԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ:

ԲՈՂ ԲԱՐԵԳՈՒԹՆ ԱՍՏՈՒԱՄ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՓԱԹՔԻ ՄԷՋ ՀԱՆԴԻՍՏ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՊԱՐ-
 ԴԵՒԻ ՄԵՐ ԱԶԳԻ ՆԱՀԱՏԱԿ ԶԱՒԱԿՆԵՐՈՒ ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆՄԵՂ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՐ ՊԱՀԱՊԱՆ ԱՋԸ
 ՏԱՐԱԽԵԱԼ ՊԱՀԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎՐԱՑ, ՈՐՊԷՍԶԻ ԱՆՈՆՑ ԿԵԱՆՔԻ ԱՐԵՒԸ ՄԻՇՏ
 ՊԱՑԵԱՌ ՇՈՂԱՑ, ՈՐՊԷՍԶԻ ԱՆՈՆՔ ՅԱՒԵՐԺ ԱՊՐԻՆ ՈՒ ԱՃԻՆ, ԵՒ ՄԻՇՏ ԲԱՐՁՐԱՆԱՆ, ԱՇԽԱՐՀԻՆ
 ԸՆԴԱՑԱԲԵՐԱՄ ԻՐԵՆՑ ԱՐԴԱՐ ՎԱՍՏԱԿՈՎ:

ԲՈՂ ԱՊՐԻ ՅԱՒԻՏ ՀԱՅ ԱԶԳԸ ՀԱՄԱՑՆ, ՈՐՊԷՍԶԻ ՇԱՏՆԱՑ ԼՈՅՍԸ ԱՇԽԱՐՀԻ:

«ԵՐԱՆԻՒՄ ՍԳԱՒՈՐԱՑ, ԶԻ ՆՈՔԱ ՄԽԻԹԱՐԵՍՅՈՒՆ: ԵՐԱՆԻՒՄ ՈՐ ՔԱՂՑԵԱԼ ԵՒ ԾԱՐԱՒԻ ԻՅԵՆ ԱՐ-
 ԳԱՐՈՒԹԵԱՆ, ԶԻ ՆՈՔԱ ՅԱԳԵՍՅՈՒՆ» (ՄԱՏԹ. Ե 4, 6):

